

ՅՆՕՐԷՆ-ԽՄՐԱԿՐԱՊՅՑ

Z. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱՏՆԱՐԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Ցարկան 500 դր
Վեցամետր 250
Շատմետր 150
Արտատման արկ 70 ևր

Բաժանորդագրութիւնք կ'սկսի
ամեն ամսոյ 1 եւ 15ից

100 ՓԱՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN
Arévélian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

Օրաթերթ ազգային եւ փառաբանական

100 ՓԱՐԱ

ՕՐՈՒԱՆ ԴԱՐՔԻՆՆԵՐԸ

(ԱՎԱՍԱՅ ԱՆԴՐԱԳՄԱՐՁՈՒՄՆԵՐ)

Մարդ երբեմն կը հարկադրուի խօսիլ և գրիլ այն տեսակ խնդիրներու մասին, որոնց հանդէպ մտազբաւ է լռել, զոնէ ժամանակի մը համար Այսօր զիս այս զիրքին մէջ կը գնին Իգմիրի մեր դաշնակցական բարեկամներէ ու մանր, որոնք ակ Մամուլին դէմ իրենց գրամարտի ընթացքին, սկսան ինծի դէմ ալ ուղղակի թէ անուղղակի կերպով քարեր նետել միմիայն և Մամուլի աշխատակցութիւնս շարունակած ըլլալուս համար:

Մեր բոլոր ընթերցողները ուշադրութիւն ըրած են անշուշտ, թէ ժամանակէ մը ի վեր աւելի շատ բանաստեղծական - գեղարուեստական գրականութիւններ կը մշակուի, պարզապէս չմտածելու համար վիճելի խնդիրներու և կարելի եղածին չորս զգուշանալու համար, քաղաքական, ընկերային և ազգային խնդիրներու ուսումնասիրութեան և ֆինանսատնտեսական մարզին մէջ վիրաւորել կարգ մը մարդերու հիւանդ գիւրդապատութիւնները, քանի որ պարզիչ և ուղղամիտ ֆինանսատնտեսականներն անգամ բաւականապէս նկատուելու և հաշակելու տրամադիր շնորհներ պակաս չեն կուսակցական կամ ոչ կուսակցական շարքերուն մէջ:

Մամուլագրագէտ Իգմիրի մեր գաշակցական բարեկամներէ ումանց մէջ մենք կը տեսնենք մտայնութիւն մը որ ուղիղ չհամեմատիր իրողութիւններու և զանոնք դիտելու և ըմբռնելու ուղիմտութեան հետ Անոնք կ'երևի շատ լաւ սերտած են սա վարդապետութիւնը, թէ զրպարտութիւն մը ամուսնի կը նշանակուի, եթէ չ'այլի, կը սեւցնէ: Անոնք իրենց մասնաշատակ մտայնութեամբ երբ ցիխարձակումներ ընեն ուրիշներու դէմ, գիտողութեան մը պահուն կը յայտարարեն: «Մեր ըրածը մտաբանութիւն է, որտեղ մտաբանութիւնը հարձակ է»: Երբ ուրիշներ քննադատեն իրենց սխալ ուղղութիւնները, իրենք կ'ըսեն «Էջ-ժուկեր կը բաւանան չ'այլի»: Ինչո՞ւ այս երկու շարքն ու երկու կ'ըսուի:

Ես կը հաւատամ, թէ այսօր, և արևմտահայութեան մէջ մանաւանդ, ազատագրուած, ամբողջական, կենսունակ և զօրուար Հայաստանի մը և Հայկական Պետութեան մը փառաբանողներ միայն կան, բայց ոչ բաւանանք: Այլապէս խորհիւն ու արտայայտուիլ միայն դաւաճանութիւն եղած պիտի ըլլար: Մեր ցուցադրած տարբերութիւնը այդ զօրուար ու կենսունակ Հայրենիքն ու Պետութիւնը ունենալու համար հետապնդուած միջոցներուն զանազանութեան մէջ միայն կը կայանայ:

Մեր գաշակցական բարեկամները կը հաւատան, թէ այդ կենսունակ և զօրուար Հայրենիքը կարելի է ունենալ գաշակցական կուսակցութեամբ մը, և այս հաւատքով պետական գործունէութեան ասպարէզը, նախարարական աթոռները կը վերապահեն գաշակցական ընկերներու: Այս մասին արդէն պարզած եմ ըմբռնումներս «Ա. Մամուլին» 2223 թիւին մէջ, զրեւով, «Եթէ բաշակցական նախարարներ կրնան պետութեան որ բաշակուած և Հայրենիքը ընդհանուր շահերուն նպաստաբար բաշակել վարձութիւն մը, այնու այն ինչ ինչէր հանելու ինչ է «Էջեւեջը կառավարչը»: Եւ մեր սեռութիւնները ընդլայնած են, քանից կուսակցական կիրքի կամ յետին միտքերու «Ա. Մամուլին» 2224 2233-34, և 2252 թիւերուն մէջ:

Կուսակցական այս ըմբռնողութեան զուգահեռաբար ուրիշներ և ընդ որս «Ա. Մամուլին» կը պնդեն, թէ Հայրենիքի նորակազմ պետութեան տալ կուսակցական հանգամանք, կը նշանակէ Հայ ժողովուրդը հետացնել հայրենիքէն, կը նշանակէ տկարացնել անոր պարզացումի և վերաշինութեան միջոցները, մէկ խօսքով կը նշանակէ Հայ ժողովուրդի ամենաստուար մեծամասնութեան արտէն խլել իր հայրենիքին և իր պետութեան վրայ հիմնելիք վստահութիւնը:

Կը հարցնենք մեր գաշակցական բարեկամներուն, թէ այս կերպ գաւառներու, ֆինանսատնտեսական կարծիքի և համոզումներու արտայայտութեան մէջ մեր պարզիչ մարդկութիւնը բաւականապէս և «ճիշդ» փորձած է չ'առնել:

Ժողովուրդներու ազատագրութեան և Հայրենիքներու կազմութեան ճամբուն վրայ համազգիներու առաջին պարտականութիւնը պէտք է նկատուի ընդունիլ, թէ ամենուն մտածումն ու ջանքը կը ձգուի Հայրենիքի բարգաւաճումին և ստեղծուած ազատութեան պահպանումին և օգտագործութեան, իսկ երկրորդը, թէ ո՞չ մէկ տեղ մարդիկ մէկ ճամբէ և մէկ ուղղութեամբ քայլած են զէպի նպատակը: Բայց մէկը պէտք է որ յանցար կամ գաւաճան նկատուի անոր համար, որ Դաշնակցականի մը կամ Հնչակեանի մը մտայնութիւնը չունի իր գաւառներուն և սկզբունքներուն մէջ Յիմարութեան ծայրագոյնը պիտի ըլլար կարգապարի կամոզումները, սկզբունքները և պարտադրի զանոնք ամենուն հաւատարմութիւն ու անխտիր: Ո՞վ է տուր իրաւունքը ազատ մտածողութեան կաշկանդումին, մանաւանդ քաղաքական խնդիրներու շուրջ, երբ անոնք չեն բղիթիլ յետէն յետէն, կամ հատուածական տիրակալութեան հաշիւներէ:

Մեր օրուան դարբինները օրէ օր բաւեր կը կերտեն իրենց թուղթէ սաւրիուն վրայ, շարախօսի և շարարարի լորձունքներով կը ջրգիցեն զանոնք, և կը նետեն հրապարակին վրայ: Ու ալ նախատական վերագրումներու, բառերու միջոց մը կուսակցական, որոնց մէջ ամենէն փողաբանականը թերեւս նկատուի բաւականապէս Այդ դարբնուած բառերու մենատիրութեան չենք նախանձա՞ծ բնաւ:

Այլապէս պէտք է որ դաւաճան հաշակելինք

1. — Պ. Վարանդեանը, որ Լոզանի իր մէկ բանաստեղծութեամբ յայտարարեց, թէ մենք կը հրաժարուինք կիլիկիայէն, Հայաստանի կազմութեան պահպանելու համար:

2. — Պ. Ահարոնեանը, որ յայտարարեց, թէ ինք պզտիկ Հայաստանի մը կողմակից է:

3. — Հայ Հանրապետութեան լիարժեքը, որ նոյնիսկ Միացեալ Հայաստանի պաշտօնական յայտարարութեան ակտէն վերջ, ըստ Արսէն Կիտուրի տեղեկատուութեան, որոշած էին Երեւանի Հանրապետութիւնը չ'առաջարկել իրենց սեփական միջոցներով, և թողուլ որ թուրքահայաստանի ազատագրութիւնը հողատիրութիւնը Եւրոպական Ֆանաթի:

4. — Պ. Սատիսեանը, որ Հայկական պետութեան նախարարապետի իր աթոռէն յայտարարեց, թէ ինք Հանրապետութեան նախարարապետը ըլլալով հանդերձ «ձառուն է զնոնք ընդդէմ հաւանցութեան»:

5. — Կարգ մը բուսական խմբակներն ու զինուորականները, որոնք զօր Անդրանիկի կողմէն պաշտօններ ստացան պոլիտիկներէ լքուած թուրքահայաստանի հողատիրութիւնը պաշտպանելու, և որոնք իրենց պարտականութենէն փախուտ տուին այդ վճարական վայրկեաններուն, և չ'պատճառ եղան, որ թուրքերը վերագրուեն այդ սպասուած հողատիրութիւնը:

Եւ հիմա մեր այս բարեացակամ լուծման իրքը վարձատրութիւն է արդեօք, որ անխտիր բաւական մտկոյն մը կը տրուի մեզի ալ, միմիայն Ա. Մամուլի աշխատակից մը եղած ըլլալուս համար:

Եւ ինչո՞ւ Ա. Մամուլի խմբակը դաւաճան նկատուէր Հայրենիքին հանդէպ, անո՞ր համար, որ ըսեր է, թէ Հայկական Հանրապետութեան կեանքը դեռ անպահանջ է և խախտուած Բայց որոնք էին, որ հակառակ պիտի պնդէին Երբէն ի վեր մեր Հանրապետութիւնը գերծուեր է զինք շրջապատող վտանգներէն, թշնամութիւններէն, չ'կատարելիներէն: Երբէն ի վեր Հայրենիքին սահմանները գծուեր ու ճշգրտուեր են, և մեր նորակազմ Հանրապետութիւնը կ'ապրի խաղաղութեան և ապահովութեան մէջ: Ինչո՞ւ ամեն բան փայլուն ցոյց տուով քննադատելով ժողովուրդը, ինչո՞ւ չունենանք քաղցութիւնը մտածանշուղտ տկարութիւններն ու վտանգը, և զանոնք դարձանել ջանալու, ինչո՞ւ չունենանք քաղաքացիական լիջութիւնն ու իմաստութիւնը վտանգի տնտեսով սպիտակ անգամներուն կամքերը չ'դիտելու, և զանոնք պարտաւստի վտանգին դիմակայելու կոտորելու անձնաբերութեամբ: Զէ՞ք խորհրդ թէ իր հիւանդութեան գիտակցութիւնը չունեցող հիւանդը դատապարտուած է մեռնելու, քանի որ անոր կեանքն ու առողջութիւնը այդ գիտակցութեան և անոր յաջորդող դարձմունքէն կ'ախտուի ունի:

Ինչո՞ւ Ա. Մամուլի խմբակը դաւաճան նկատուէր, անո՞ր համար, որ կը հաւատար, թէ Պօղոս Նուպարի հրաժարումին ճշունդ տուող պարագաները, և կուսակցական խտրութիւնները կրնան վնասել ազգային փոխառութեան յաջողութեանը: Բայց այս միևնույն մտածումները, մտավախութիւնները յայտնուած են ուղղակի նաև Պ. Սատիսեանի, ըսելով, «Եթէ այս հարցնալիս չ'դիտուի անաւոր ճշմարտութիւնը, և կը յայտարարէ, «Յուսելի է որ Հայաստանէն դուրս (է՛մ և Հայաստանէն ներս) կուսակցական պայքարը կը ստանայ սուր հանգամանք մը: Ես հոս կոչ պիտի ընեմ բոլոր հատուածներու, որ համախառնութիւն միևնույն նպատակի շուրջ»:

Անո՞ր համար, որ փառաբանող Սատիսեանի ներկայութիւնը Իգմիրի մէջ տեսնել իբր «արգելի» «իբ պատկանած կուսակցութեան սանձարձակ ու խլալալ ընթացքին»: Բայց Պ. Սատիսեան ինքնաբերաբար այդ պէտքը զգացեր է, և կը յայտարարէ. «Քիչ-քիչ փոքր-փոքր յետեւ չ'ստանալուս, ես չեմ հաւատար, որ Հայաստան ըլլայ կենսունակ»:

Այս պարտականութիւնը մեր ալ վրայ կը ծանրանայ, քանի որ կը հաւատանք, թէ եթէ ոչ կուսակցութիւններու ձուլումին, բայց անոնց համարաչա համազարծ կցութեան հետ սերտորէն կապուած է Հայաստանի և Հայկական պետութեան ճակատադիրը: Կը յուսանք, թէ Պ. Սատիսեան եթէ չ'զրկուէր ազգացութիւնը ունենալ իբր կուսակցութեան վրայ, Ազգ. պատուիրակութեան հետ Համագործակցութեան խնդրոյ շուրջ, զոնէ այս անգամ յաջողութեամբ պիտի պատկուէ իր ջանքերը, որովհետեւ, կը կրկնեմ, այդ յաջողութեան կատարումն ունի թէ փոխառութեան յաջողութիւնը, և թէ Հայրենիքին ապագան կը վերջացնեն խօսքս յայտարարելով օրուան դարբիններուն, թէ մենք ինքզինքնին անաւոր կը նկատենք իրենց կողմէ գարբնուած բաւական մակարդին, զոր «կը գործածեն առանց անոր սահմանը գիտնալու», ինչպէս կը յայտարարէ պ. Սատիսեան, անոր համար, որ տարակուս չ'ունենալ մեր անխտիր և անհաղթ հայրենասիրութեան մասին, և մեր բոլոր հողով կապուած կրքանք ինքզինքնին Հայրենիքին, որուն նուիրուեցանք առանց հաշիւի և յետին միտքերու, առանց բաւականապէս հայրենասիրութեան: Եւ օրուան դարբինները չ'էին, որ մեզ պիտի պրկէին մեր Հայրենիքի ու Պետութիւնը սիրելու մեր պարտքն և մեր իրաւունքն:

Եւ եթէ անոնց բարի նպատակն է ընդունանշուղտ հրապարակ պովկելով գործունէութեան կուսակցական ստեղծել իրենց համար, անոնք մտածելու չեն կրնար հաշակուող խօսքը «Կրնանք ուսել ԲՈՂՈՐ ԺՈՂՈՎՈՐԻՒՄԻՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԸ, ԺՈՂՈՎՈՐԻՒՄԻՆ ՄԱՍ ՄԸ ԱՄՍՆ ԺԱՄԱՆԱԿ, ԲՅՕՑ ԶԵՔ ԿՐԵԱՐ ԱՄՐՈՂ ԺՈՂՈՎՈՐԻՒՄԻՆ ԱՄԱՆ ԱՄՍՆ ԺԱՄԱՆԱԿ»:

Եւ յետոյ լրջօրէն ընդունենք, թէ Հայրենիքի մը վերաշինութեան գաղափարը ուղիղ չ'կրնար համեմատուի խաբէութեան և ամբոխապարտութեան գրութիւններու հետ: Լուրջ և ուղղամիտ գործունէութեան, սկզբունքներու, գործելակերպի նուիրումն է միայն ճշմարիտ հայրենասիրութեան գործը: Եւ մենք անկէ պիտի չ'հեռանանք բնաւ:

ՄԱՐԵՆՆԱՆ ԱՐԳԵՂԻՍԿՈՂՈՍ

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

Պ ա ռ տ օ ն ա կ ա ն Զ ե կ ո յ յ ց

Պ Ա Ն Տ Ր Մ Ա Յ Ի Ե Ի Մ Ա Ր Մ Ա Ր Ա Ծ Ո Ղ Ո Ւ Ն Կ Ի Մ Ա Ի Ո Ւ Մ Ը

Պալլբէսէրէն, սպարապետ Բարաքէվորուց, տեղոյս բարձր գոմիսէրու-
թեան հետեւեալ հեռագիրը քաշուած է.—

Հիւսիսային զօրաբաժիններու գործողութիւնները այսօր լրացած են Պան-
տըմայի և Մարմարա ծովուն գրաւումով:

Թշնամին, Պալլբէսէրի կոիւնէրէն վերջ ւեժնօրէն հետապնդուեցաւ:
Միայն մնացորդ անշատ խուճիկը յաջողած են անցնիլ Պրուսի սահմանները:
Առաւօտուն Պանտրա ցամաք զօրք հանելով վերջ որուեցաւ այս գործողու-
թեանց:

Այն փափուկ գործողութիւնները կատարուած են ճշգրտօրէն և սպայա-
կոյսին գծած յառակացին համեմատ Յամաք ելած զօրաբաժինը, նաւատորմի-
զին պաշտպանութեան տակ, արագօրէն անցաւ դէպի հարաւ և հանգիստեցաւ
Օմէր-Գէօյի մօտ մեր յառապապահներուն հետ: Այս գիւղը կը գտնուի Պալլբէ-
սէրէ 25 քիլօմէթր հիւսիս արևելք: Այս գործողութիւնը լրացած է երեքու կէս
օրուան մէջ, մեր գունդերուն հիանալի ասկունութեան շնորհիւ:

ՕԼԹԻ ԵՒ ԶԱՆԿԻՐԱԶԱՐ

Պաշտօնապէս կը հաստատուի վերջին պահուն թէ հայկական բանակը եր-
կու ճակատի վրայ սարած է մեծ յաղթանակ. գրաւելով Զանկիրազարը և Օլ-
թին: Օլթի Հայաստանը կ'մտնեցնէ դէպի Սև ծով որ հարուստ հանքածուխի
չըլանն է:

Օլթի գրաւողն է Աղեքսանդրօրուի այն զօրամասը որ մուրուրուած էր մա-
լիսեան դէպքերուն մէջ, բայց այժմ բարձր տրամադրութեամբ և հերոսական
Թափով կը կռուի հայրենիքին համար: (Ժ. Զոյն)

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐ

Երէկ քաղաքս հասաւ Հայ կամաւորական խումբ մը որ շուրջ 1200 հոգիէ
կը բաղկանար: Կամաւորները պիտի ծառային Հելլէն բանակին մէջ:

ԶԱՆԳԵՂՈՒՐԻ ՍՊԱՅԱԿՈՅՏԸ

Մայիսին Հարաբողէն ստացուած տեղեկութիւններու համաձայն գիշեր-
ւան ժամը Յին մերոնք յանկարծակի կերպով յարձակեցան Մոնազմանուի վը-
րայ, այն բարձունքներուն վրայ՝ ուր կեդրոնացած են ատրպէյճանական կա-
նոնաւոր զօրքեր, որոնք հաւաքուած էին յարձակելու և Հարապաղ-Զանգէ-
զուր ճանապարհը կտրելու նպատակով: Մեր յարձակումը ստուշուուն ժամը 8
ին վերջացաւ թշնամիին կատարեալ պարտութեամբ, թշնամին անկանոն կեր-
պով փախչելով թողուց բաւական դիակներ, հրացաններ, մաքսիմ գնդացիր,
ուղղանիւթեր և փամփուռա:

Պ. ԼՕԻ ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հասարակաց Պորհրդարանին մէջ եղած հարցումի մը պատասխանելով, Պօ-
նար Լօ յայտարարած է թէ որեւէ քայլ մը չէ աւելուած բրիտանական կառա-
վարութիւնէն, հելլէն զինուորական շարժումները կասեցնելու համար, մանա-
ւանդ որ այս վայրկեանիս այդպիսի հարց մը կարելի չէ որ գոյութիւն ունե-
նայ, քանի որ հելլէն բանակը կատարեալ համաձայնութեամբ կը գործէ դաշ-
նակիցներուն հետ:

Մ. ԲԷՄՍԼ ԵՒ ԶՕՐ. ԿՈՒՐՕ

«Թան»ի մէջ կը կարդացուի հետեւեալը.—

«Հելլէններէն հասած Փրանսացի ճամբորդները կը տեղեկացնեն թէ Մ. Բէ-
մալ ծանուցած է զօր. Կուրօի հետ կնքուած զինուորապարէ: Պահանջած է Ատա-
նայի պարպումը, Էրէլլիէ և Զօնկուլաքէ Փրանսական պունդիւր: մեկնումը
և անխանգեբուն յանձնուիլը քեմալականներուն: Հակառակ պարագային
անիկա պիտի յարձակի անխանգեբուն ամբողջ երկայնքը՝ Փրանսացոյ
վրայ:

ԴԵՊԻ ԵՐԷՅԼԻ

Բրիտանական օդանաւերը Իզմիրէ անցին սաւառնելով Նշմարած են որ
Թրքական զօրեղ զօրաբաժին մը կ'ուղղուի Էրէլլիի վրայ:

Քեմալականները շատ պէտք ունին սծուլի, Նոյնպէս կուզեն Պօլիսը գրծ-
ւարին կացութեան մը մատնել, զայն զրկելով անուխէ: Մալթէփէի և Կէյրի-
զէի շրջակայքին մէջ խիստ պաշարման վիճակ յայտարարուած է անգլիացեաց
կողմէ:

Պ. Տ Ե Շ Ա Ն Է Լ

Բարիզէ կը հեռագրեն թէ Ֆրանսայի հանրապետութեան նախագահ Պ.
Քօլ Տէշանէլ վերջնականապէս ապաքինած ըլլալով, երեք օրէ ի վեր սկսած է
իր զբօղանքներուն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հասած վերջին տեղեկութեանց համեմատ, Թուրք պատուիրակութիւնը
պարզօրէն պիտի հրաւիրուի ստորագրելու համար գաշնագիրը:

Թուրք ներկայացուցիչներուն զրկուելիք հրաւիրագրերը արդէն պատրաս-
տուելու վրայ են:

ՊՐԻՒՍԷԼԻ ՀՆՄԱԺՈՂՈՎԸ

Հռոմէ կը հեռագրեն թէ Պրիւսէի Համաժողովին պաշտօնական զեկոյցը
կը յայտարարէ թէ Համաժողովը լուծած է կարգ մը խնդիրներ:

ՎՆԱՍՈՒՑ ՀՆՏՈՒՑՈՒՄԸ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Հնտոնէ հասած տեղեկութեանց համեմատ Մր. Լօյտ ձօրձ առաջարկած է
որ Անգլիա և Ֆրանսա, Գերմանիոյ տուգանքէն իրենց բաժնին 30/100 զեղջին,
որպէսզի իտալիա ևս ստանայ իր իրաւունքը: Կոմս Սֆօրցա իտալիոյ պատ-
րակը, մերժած է այս առաջարկը:

ՄԻԼՈՒՆ ՊՐԻՒՍԷԼԻ ՄԷՋ

Վարչապետ Միլան և Մարաշիստ Յօշ Պրիւսէլ հասած են, համաժողովին
ներկայ ըլլալու համար: Պրիւսէլի ժողովուրդը ծափահարութեամբ ընդունած է
Ֆրանսայի ներկայացուցիչները:

ՍՐԱԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Բարիզէ հասած տեղեկութեանց համեմատ Սրաի Համաժողովը առջի օր
սկսած է իր աշխատութեանց:

Առաջին նիստին մէջ վիճարանութեան ենթարկած են Գերմանիոյ տալիք
կանխավճարին բաժանումը համաձայնական տէրութեանց միջև:

Յետոյ, նոյն նիստին մէջ Թուրք ներկայացուցիչները պիտի հրաւիրուին
ստորագրել հաշտութեան գաշնագիրը, տուանց ժամանակ անցնելու:

ՊԻՏԻ ՍՏՈՐԱԳՐԵՆ

Բարիզէ հասած տեղեկութիւնները կը հաստատեն թէ Թուրք ներկայա-
ցուցիչները պիտի փութան ստորագրել հաշտութեան գաշնագիրը, ինչպէս որ
պատրաստուած է Սան-Րէմօի մէջ:

ՊԱՏԱՍԻՆԷՆ ՎԵՐՋ

Մեծ Եպարքոսը, հաշտութեան համաժողովին պատասխանը ստանալէն
վերջ պիտի գաւնայ Պօլիս: Բարիզ պիտի մնայ Թէվֆիզ փաշան:

Թրքական տղերքէն տունուտ լուրերու համեմատ համաժողովը զեւէ տրա-
մագրութիւն ցոյց չտար գաշնագրին մէջ փոփոխութիւններ ներմուծելու մա-
սին կը յուսացուի որ համաժողովը իր պատասխանը տայ այս շաբթուան
մէջ:

ՓՐԱՆՍԱ ԵՒ ԵՄԵՐԻԿԱ

Ուաշինկթընէ կը հեռագրուի թէ Ֆրանսայի հիւպատոս Պ. Ժիւսթան, իր
մեկնումէն առաջ ճաշած է նախագահ Ուելլընի հետ:

ԼՕՏՏ ԶՕՐՃԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Լօյտ ձօրձ հասարակաց խորհրդարանին մէջ յայտարարած է հետեւեալը
Փոքր Ասիոյ հարցին վերաբերեալ.—

«Մեզի Պօլսոյ և Նեղոսցիներու մտայն հարցապնդում մը եղաւ: Կատարե-
լապէս ճիշտ է որ մենք ստանձնելու վրայ ենք Նեղոսցիներու պահպանութեան
մէջ մեզի ինկած բաժնին և ևեւի բարձր աշխատանք մը: Ներկայիս Ֆրանսա
ուրիշ վայրերու մէջ դաշտուած է: Իտալիոյ ունեցաւ երկու երեք նախարա-
րական տաղանակ, բայց ես ոչ մէկ պատճառ ունիմ հաւատարմ թէ Ֆրանսա
և Իտալիա չուզին բերել իրենց հաւատար մասնակցութիւնը մօտաւոր ապագայի
մէջ Նեղոսցիներու պահպանութեան համար:

«Մեզի ուրիշ հարցապնդում մը ուղղուցին յոյներուն և բրիտանական զօ-
րաց յարաբերութեան մասին: Յոյները ձեռնարկած են կարգ մը անկախ զօր-
ծողութիւններու: Իսկ ուրիշ կարգ մը գործողութեանց համար Յոյները և Անգ-
լիացիք միտայն պիտի գործեն բրիտանական հրամանատարութեան տակ:

Աշխարհի այս մասէն եկած լուրերը լաւագոյն են, քան անցեալ շաբ-
թուան հեռագրերը: Անմիջապէս յայտարարեմ թէ կուի այս յատկագրի՞ծը
Ֆօշ և վիլսոն մտախախտներուն չլ պարտագրուած, այլ անիկա կը բղի
այս երկու մարտախոսներէն և որ Պ. Միլանի և իմ հաւանութեան ենթա-
կուած է միտայն:

Կը յուսում, և ևեւի ուշ, Պորհրդարանին տալ այս մասին և ևեւի լայն տե-
ղեկութիւններ: Ես կը կարծեմ թէ Միլանգէտքի և աշխարհի այս փոքր մասին
մէջ կարելի է խաղաղութիւնն հաստատել միմիայն յայտարարելով խիստ յըս-
տակօրէն թէ մեր քաղաքականութիւնն է ազատել թուրքիոյ լուծէն զօրը
ընկալութիւնները որոնք Թուրք չեն և թէ այս քաղաքականութիւնը որ ըն-
գունուած ամբողջ այս խորհրդարանէն, գործողութեան պիտի գրուի:

«Թէ Մ. Քէմալի կամ ուրիշ անձի մը թող արուի կազմակերպել գունդեր
այս քաղաքականութեան դէմ կռուելու համար Եւրօպա թերացած պիտի ըլ-
լար իր պարտականութեանց մէջ: Ասկէ զատ մենք չպիտի ծախսենք սանթիմ
մը, որ գործուած չըլլայ մեր արաքելութեան համար: Երթանք ուրեքն դէպի
այս երկիրը: Անոնք մեզ պիտի օրհնեն:

ՏԱՄԱՏՔ ԳԵՐԻՏԻՆ ՊԱՏԱՍԻՆԸ

Հռոմէ հասած լուրերու համեմատ, Տոմատ Ֆերիտ փաշա համաձայնական
տէրութեանց տուած իր պատասխանին մէջ կը պնդէ որ, Թուրքիոյ չկրնար
ընդունել իզմիրի մասին Սան-Րէմօի մէջ տրուած կարգադրութիւնը:

ԲՈՂՈՆԻԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ

Կր տեղեկացուի թէ Բոլնիացիք Նոր յաղթանակ մը տարած են պօլշէ-
վիքներու դէմ: Կարմիր բանակին յարձակումները մղուած են մեծ կորուստ
պատճառելով անոր:

ԴԱՇՆԱԳԻՐԸ ԱՆՓՈՓՈՒ

Բարիզին հասած հեռագրերը կը հուսատեն թէ Հաշտութեան Համաժո-
ղովը Թուրք պատուիրակութեան ծանուցած է որ Սան-Րէմօի մէջ պատրաս-
տուած գաշնագիրը փոփոխութեան չպիտի ենթարկուի:

ՀՆԼԼԷՆ ՅԱՌԱՋԻՍՏՈՂԱՑԻԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բարիզէն կը հաղորդուի թէ Թուրք կառավարութիւնը վարչապետ Տոմատ
Ֆերիտ Փաշայի ստիպողութեամբ հեռագրի մը քաշած է, որով մեծ-եպարքոսին
հրահանգ կուտայ ամէն շաբթ չինայիլ: Փոքր Ասիոյ մէջ հելլէն ուժերու
յոռաշացումը կասեցնելու համար:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

«Բէլ-Մէլ-Կազէթ» հրատարակելով Փոքր Ասիոյ մէջ հելլէն զինուորներուն
յաջողութեանց առաջին լուրերը, կը գրէ որ Թուրքիոյ արժանի էր այսպիսի
խիստ զինուորական գասի մը, որովհետեւ անիկա սկսած էր իր պարտեալի
հանգամանքէն: Ինչեւով սպառնալ համաձայնականներուն: Հելլէն յոռաշացում-
ները ցոյց պիտի տան Թուրքերուն թէ հաշտութեան գաշնագիրը ապրող իրա-
կանութիւն մըն է և ոչ թէ Նիւղթի կտոր մը որ կ'ներկայացնէ նաև համաձայ-
նական պետութեանց Թուրքիոյ հանդէպ ունեցած արդար և կորովի դէրձը:

ՓՈՓՈՒՍՈՒԹԻՒՆ Ի ՎՆԱՍ ԹՈՒՐԿԻՈՅ

Արիւսական թերթերու տեղեկութեանց համեմատ Սան-Րէմօ պատրաստը-
ւած գաշնագիրը պիտի վերաքննուի Սրաի մէջ ի վնաս Թուրքիոյ:

ԳՈՐԾԵԼՈՒ ԱԶՏՏՈՒԹԻՒՆ

Սրաի Համաժողովին մէջ հելլէն վարչապետ Պ. Վէնիզէլոս համաձայնա-
կան տէրութիւններէն պիտի պահանջէ և ևեւի լայն ազատութիւններ, գործելու
համար Փոքր Ասիոյ մէջ, ընդգէմ քեմալականներուն Այս մասին Պ. Վէնիզէ-
լոս համաժողովին պիտի ներկայացնէ պատճառներ և պայմաններ, որոնք կա-
րող պիտի ըլլան համազել գաշնակիցները այսպիսի գործելու ազատութեան մը
օգուաններուն վրայ:

